ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 387-Ա

21 հուլիսի 2025 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՂԲՅՈՒՐԻ Կ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՀԵՐՄԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ և 6-րդ կետի 1-ին ենթակետի, 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված հավելված N 3-ի 60-րդ կետի պահանջներն, ինչպես նաև Հերմինե Պետրոսյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուրի Կ. Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը 2025 թվականի հուլիսի 21-ից վերապահել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուրի Կ. Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Հերմինե Պետրոսյանին՝ մինչև օրենքով սահմանված կարգով հիմքի վերացումը:

2"Հերմինե Պետրոսյանին՝ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուրի Կ. Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումն իրականացնել ոլորտը կանոնակարգող նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

3. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուրի Կ.Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի լիազորությունների և պարտականությունների կատարումը վերապահել Հերմինե Պետրոսյանին՝ մինչև օրենքով սահմանված կարգով հիմքի վերացումը (առանց տնօրենի պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի վճարման, համաձայնությամբ):

21.07.2025

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ք.Գավառ